ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՆԿ-ՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԸ
SPECIAL TOPIC: NT EVIDENCE FOR ONE'S SALVATION

Մարդու փրկության ապացույցը հիմնված է Հիսուսով Նոր Ուխտի վրա (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36)՝

1. Հոր բնավորությունը (տես՝ Հովհ. 3:16), Որդու գործը (տես՝ 2 Կորնթ. 5:21) և Սուրբ Հոգու ծառայությունը (տես՝ Հռոմ. 8:14-16) ոչ թե մարդկային գործերը (տես՝ Եփես. 2:8-9), ո՛չ հնազանդության համար վարձք, և ո՛չ պարզապես կանոն՝ օրենք:
2. Պարգև է (տես՝ Հռոմ. 3:24, 6:23, Եփես. 2:5,8-9)
3. Նոր կյանք է, նոր աշխարհայացք (տես՝ Հակոբոս և 1 Հովհաննես)
4. Գիտություն է (ավետարանը), փոխհարաբերություն (հավատք Հիսուսի հանդեպ) և նոր ապրելակերպ (Հոգով առաջնորդվող Քրիստոսանմանություն, տես՝ Եփես. 1:4, 2:10) բոլոր երեքը և ոչ թե միայն մեկն առանձին:
5. 1 Հովհաննես 2:2-3-ում իրական փրկության ստուգումներ՝
   ա. մեղքը խոստովանելու հոժարակամություն (սկզբում և մշտապես), 1 Հովհ. 1:9
   բ. հնազանդությունը որպես ապրելակերպ, 1 Հովհ. 2:7-11
   գ. սիրո ապրելակերպ, 1 Հովհ. 2:7-11
   դ. չարի վրա հաղթանակ, 1 Հովհ. 2:12-14
   ե. աշխարհը թողնելը, 1 Հովհ. 2:15-17
   զ. համբերատարություն, 1 Հովհ. 2:19
   է. ճիշտ վարդապետություն, 1 Հովհ. 2:20-24, 4:1-3

Սրանք կարող են ամփոփվել երեք ոլորտներում՝

1. վարդապետական ստուգում (հավատք Հիսուսի հանդեպ, տես՝ 1 Հովհ. 2:18-25, 4:1-3, 14-16, 5:1,5,10)
2. ապրելակերպի՝ կյանքի ստուգում (հնազանդություն, տես՝ 1 Հովհ. 2:3-7, 3:1-10, 22-24)
3. սոցիալական ստուգում (սեր, տես՝ 1 Հովհ. 2:7-11, 3:11-18, 4:7-12,16-21, 5:1-2)

Հիշե՛ք, որ ավետարանը՝

1. անձ է, որին պետք է ընդունել (անձնական փոխհարաբերություն)
2. այդ անձի վերաբերյալ ճշմարտություններ են, որոնց պետք է հավատալ
3. այդ անձի կյանքի պես ապրելու կյանք է (Քրիստոսակերպությունը նպատակ է):